ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՌԵԿՏՈՐ

ՀՐԱՄԱՆ

ԹԻՎ 062/1-2019

«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը և անվանական կազմը հաստատելու մասին

25.06.2019թ. ք. Երևան

Հիմք ընդունելով Արդարադատության ակադեմիայի ուսումնական, գիտահետազոտական և ծրագրամեթոդական գործունեության պլանավորման, համակարգման ու կարգավորման արդյունավետության բարձրացման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ և 8-րդ կետերով, «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրության 28-րդ կետի 7-րդ և 8-րդ ենթակետերով՝

Հրամայում եմ

1. Հաստատել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի կանոնակարգը՝ համաձայն հավելված 1-ի:
2. Հաստատել «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի անվանական կազմը՝ համաձայն հավելված 2-ի:

Ս. Առաքելյան

Հավելված 1
*«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2019թ. հունիսի 25-ի թիվ **062/1-2019** հրամանի*

Ռեկտոր** _____ **Ս.Վ. Առաքելյան
«25» 06 2019թ.

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ակադեմիա) գիտական խորհրդի (այսուհետ՝ Գիտական խորհուրդ) կազմի ձևավորման և գործունեության կարգը, նիստերի նախապատրաստման և անցկացման, որոշումների ընդունման ընթացակարգերը:
2. Սույն կանոնակարգում փոփոխությունները և լրացումները կատարվում են Գիտական խորհրդի ներկայացմամբ՝ Ակադեմիայի ռեկտորի (այսուհետ՝ Ռեկտոր) կողմից:
3. Գիտական խորհուրդը Ռեկտորին կից գործող՝ Ակադեմիայի ուսումնական, գիտահետազոտական ու ծրագրամեթոդական գործունեության պլանավորմանը, համակարգմանը և կարգավորմանը օժանդակող կոլեգիալ մարմին է, որի լիազորությունների ժամկետը երեք տարի է:

II. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Գիտական խորհուրդը՝
   1) հաստատում է իր աշխատակարգը և նիստերի ժամանակացույցը.
   2) քննարկում է Ակադեմիայի գիտական գործունեության գլխավոր և հեռանկարային ուղղությունները.
   3) լսում է գիտական հաղորդումներ Ակադեմիայում կատարվող կարևորագույն գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների արդյունքների մասին.
   4) առաջարկություններ է ներկայացնում Ռեկտորին՝
      – իր կանոնակարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբեր-

յալ,

- «Արդարադատության ակադեմիայի պատվավոր պրոֆեսոր» և «Արդարադատության ակադեմիայի պատվավոր բարեկամ» կոչումներ շնորհելու, Ակադեմիայի «Հուշամեդալով» և «Համագործակցության համար մեդալով» պարգևատրելու վերաբերյալ,
- Ակադեմիայի կրթական չափորոշիչների, ուսուցման ծրագրերի, դրանց իրականացման կարգերի և ժամանակացույցերի վերաբերյալ.

5) քննարկում և հրատարակության է երաշխավորում պարբերական գիտական հրատարակություններ, մենագրություններ, գիտական հոդվածներ, ուսումնական ձեռնարկներ և այլ նյութեր.
6) քննարկում և կարծիք է ներկայացնում ատենախոսությունների և դրանց սեղմագրերի վերաբերյալ.
7) ըստ անհրաժեշտության ստեղծում է Գիտական խորհրդին կից գործող մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, սահմանում դրանց կառուցվածքը, կազմերի ձևավորման կարգը և աշխատակարգը.
8) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությունից և սույն կանոնակարգից բխող այլ լիազորություններ:

III. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

5. Գիտական խորհրդի անդամների ընդհանուր թիվը 16 է, որի առնվազն 50 տոկոսը կազմում են իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցողները և դատական, դատախազական, քննչական մարմինների ներկայացուցիչները:
6. Գիտական խորհրդի կազմում ի պաշտոնե ընդգրկվում են Ռեկտորը (Գիտական խորհրդի նախագահ), պրոռեկտորը, Ռեկտորի խորհրդականը, հեռաուսուցման և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի ղեկավարը, գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավարը (Գիտական խորհրդի քարտուղար):
7. Գիտական խորհրդի անվանական կազմը հաստատվում և փոփոխվում է Ռեկտորի հրամանով:

IV. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ՆԻՍՏԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Գիտական խորհուրդն իր լիազորություններն իրականացնում է հերթական և արտահերթ նիստերի միջոցով:
9. Գիտական խորհրդի հերթական նիստերը հրավիրվում են տարեկան առնվազն երկու անգամ:
10. Գիտական խորհրդի նիստերը նախապատրաստում են Գիտական խորհրդի նա-

խագահը և Գիտական խորհրդի քարտուղարը:

11. Գիտական խորհրդի քարտուղարը, Գիտական խորհրդի նիստ հրավիրելու և նիստի օրակարգի մասին գրավոր՝ էլեկտրոնային փոստի միջոցով, ծանուցում է Գիտական խորհրդի անդամներին հերթական նիստի անցկացման օրվանից առնվազն հինգ, իսկ արտահերթ նիստի անցկացման օրվանից՝ առնվազն երեք օր առաջ՝ տրամադրելով նաև տվյալ նիստում քննարկվող հարցերի վերաբերյալ նյութերի փաթեթը:
12. Գիտական խորհրդի արտահերթ նիստերը կարող են հրավիրվել Գիտական խորհրդի նախագահի կամ Գիտական խորհրդի անդամների առնվազն 1/3-ի առաջարկով:
13. Գիտական խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է գիտական խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:
14. Գիտական խորհրդի անդամների ներկայությունը գրանցում է գիտական քարտուղարը՝ նիստն սկսելուց առաջ:
    Քվորումը չապահովելու դեպքում Գիտական խորհրդի նախագահի որոշմամբ գրանցման գործընթացը կարող է երկարաձգվել մինչև 30 րոպե, որից հետո քվորում չապահովելու պարագայում նիստը հետաձգվում է:
15. Գիտական խորհրդի քվորումի բացակայության պատճառով հետաձգված նիստը՝ նույն օրակարգով, գումարվում է սույն կանոնակարգով սահմանված ընդհանուր հիմունքներով:
16. Ռեկտորը, բացելով Գիտական խորհրդի նիստը, տեղեկատվություն է տրամադրում քվորումի առկայության վերաբերյալ, և քվեարկության է դնում նիստի օրակարգը: Ռեկտորի հանձնարարությամբ նիստը կարող է վարել գիտական խորհրդի անդամներից որևէ մեկը:
17. Գիտական խորհրդի անդամները կարող են առաջարկել նիստի օրակարգում ընդգրկել այլ հարցեր, ինչը սահմանված կարգով դրվում է քվեարկության:
18. Նիստի օրակարգում ներառված հարցերի քննարկման կարգը, հիմնական և հարակից զեկույցների, ինչպես նաև ելույթների տևողությունը որոշում է Գիտական խորհուրդը՝ նիստը նախագահողի առաջարկությամբ:

V. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

19. Գիտական խորհրդի որոշումներն ընդունվում են Գիտական խորհրդի նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ՝ բաց քվեարկությամբ, եթե գիտական խորհուրդն այդ որոշման ընդունման համար քվեարկության այլ կարգ չի սահմանել:
20. Քվեարկության արդյունքները հաստատվում են Գիտական խորհրդի կողմից՝ նույն նիստում:

VI. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

21. Գիտական խորհրդի որոշումները կիրարկվում են Ռեկտորի հրամաններով:
22. Ռեկտորն իրավասու է կասեցնելու Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք չեն բխում նրա լիազորություններից, հակասում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Ակադեմիայի կանոնադրությանը, սույն կանոնակարգին և ներքին իրավական այլ ակտերին:
23. Գիտական խորհրդի այն որոշումները, որոնք Ռեկտորի կողմից կասեցվել են ընդունման ընթացքում ընթացակարգային խախտումներ թույլ տալու պատճառով, դրվում են վերաքննարկման և վերաքվեարկության Գիտական խորհրդի նույն կամ այլ նիստում:
24. Գիտական խորհրդի որոշումների կասեցման մասին Ռեկտորի հրամանները պետք է լինեն հիմնավոր և պատճառաբանված:

VII. ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

25. Գիտական խորհրդի նիստերն արձանագրվում են: Նիստերի արձանագրությունը երկու օրինակից կազմում է գիտական քարտուղարը Գիտական խորհրդի նիստն ավարտվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում: Արձանագրությունը ստորագրում են Գիտական խորհրդի նախագահը և գիտական քարտուղարը:
26. Արձանագրության մեջ պետք է նշվեն նիստի անցկացման ամսաթիվը, նախագահողը, քարտուղարը, քվեակազմը, նիստի օրակարգը, ելույթների հիմնական դրույթները, քվեարկության դրված հարցերի բովանդակությունը, քվեարկության արդյունքներն ու Գիտական խորհրդի կողմից ընդունված որոշումները:

Հավելված 2
*«Արդարադատության ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի 2019թ. հունիսի 25-ի թիվ **062/1-2019** հրամանի*

Ռեկտոր** ____ **Ս.Վ. Առաքելյան
«25» 06 2019թ.

ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄ
«ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

I. Ի պաշտոնե անդամներ՝

1. **Առաքելյան Սերգեյ** (ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր) – ***գիտական խորհրդի նախագահ.***
2. **Իսրայելյան Գևորգ** (գիտահետազոտական և ծրագրամեթոդական աշխատանքների կազմակերպման բաժնի ղեկավար, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ). – ***գիտական խորհրդի քարտուղար.***
3. **Մանասյան Անահիտ** (պրոռեկտոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ).
4. **Ենգիբարյան Վահե** (ռեկտորի խորհրդական, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր).
5. **Խուրշուդյան Արտաշես** (հեռաուսուցման և տեղեկատվական տեխնոլոգիաների դեպարտամենտի ղեկավար, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու).

II. Իրավագիտության բնագավառում գիտական աստիճան ունեցող անդամներ՝

6. **Ղազինյան Գագիկ** (ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր).
7. **Ավետիսյան Դավիթ** (ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ).
8. **Գաբուզյան Արա** (ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր).
9. **Հովհաննիսյան Վահե** (ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր).
10. **Վաղարշյան Արթուր** (ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր).

III. Դատական, դատախազական և քննչական մարմինները ներկայացնող անդամներ՝

11. **Նիկողոսյան Արսեն** (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու).
12. **Մարաբյան Սերգեյ** (ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու).
13. **Բաղդասարյան Գևորգ** (Երևան քաղաքի դատախազ, իրավաբանական գիտությունների թեկնածու).
14. **Բիշարյան Կարեն** (ՀՀ գլխավոր դատախազության հատկապես կարևոր գործերով քննության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ, իրավաբանական գիտությունների թեկնածու).
15. **Մինասյան Արշալույս** (ՀՀ հատուկ քննչական ծառայության պետին առընթեր ՀԿԳ ավագ քննիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու).
16. **Թումանյան Քրիստինե** (ՀՀ քննչական կոմիտեի քրեական գործերի քննության աջակցության վարչության ՀԿԳ ավագ քննիչ):